

ՊՈՒՏՏԱԿԱՆ ՏԱՃԱՐ ԻՓՕՉԻՆՉԻՆ

Արեւելեան Ասիոյ մեծ երկիրներէն մէկն ալ Քօչինը կամ Աննաւի կայսերութիւնն է որ Հնդկա—Չինաց թերակղզոյն դրացի է, եւ երկայն ժամանակ անձանօթ մնացած եւրոպացւոց: Երկրին մակերեւոյթը կ'համարուի 550,000 քիլոմէթր. իսկ բնակիչքը՝ 15—20 միլիոն: Քօչինը՝ ըստ վերջին տեղեկութեանց՝ լեռնոտ անտառախիտ ու բարեբեր երկիր մի է, շատ աղնիւ ծառեր ունի, ինչպէս արանոս, հալուենի, եւ այլն: Բերքն է բրինձ, եգիպտացորեն, շաքարեղէգ, չայ, բամբակ, թիթենի, եւ մանաւանդ մետաքս, որ Քօչինը գլխաւոր հարստութեանց միւնն է, եւ կերպանն ու բամբակեղէնը՝ շատ յարգի:

Բնակիչքը գլխաւորապէս երեք ցեղ կրբաժնուին. Քօչինցիներ կամ Աննաւցի որ Չինացւոց շատ մօտ են. Քաւկոնցի որ Սիամացւոց կնմանին, եւ Մոլեցի՝ որ Քաֆրաստանցոց ցեղին մօտ են եւ նոցա պէս վայրենի կեանք կանցընեն լեռներու վրայ: Քօչինացիացոց սովորութիւնքն ու օրէնքները Չինաց պէս են:

Կրօնը՝ կռապաշտութիւն է՝ Պուտտայի աղանդէն, ու վերին դասուց մէջ ծաւալած է Կոնփուկիոսի վարդապետութիւնը. իրենց քրմերը որ քալափոյի կըսուին՝ շատ պատիւ չունին: — Մէջերնին քրիստոնէութիւնըն ալ մտած է ժիգարէն իվեր՝ գաղղիացի քարոզչաց ձեռքով, եւ այժմ քանի մը հարիւր հազար քրիստոնեայ կ'համրուի:

Կառավարութիւնը բացարձակ միապետութիւն է, եւ ժողովուրդը երկու կըաժնուի, յաղնուականս (մանսարին) եւ իռամիկ կամ խաժամուժ՝ որ գերիի պէս են:

Չինուորութիւնը բաւական առաջ գնացած է մէջերնին, որովհետեւ 1787-ին՝ նոցա թագաւորը կամ կայսրը Գաղղիացւոց պաշտպանութիւնը խնդրած լինելով՝ շատ մը գաղղիացի սպայք Քօչինը գնացին, եւրոպական կարգեր մտուցին ու տէրութեան գլխաւոր պաշտօնները ձեռք առին: Բայց եւ այնպէս՝ Միւնկ—Մանկ (1820—42) Թիւօ—Թրի (1842—47) կայսրը շատ թշնամութիւն բրին եւրոպացւոց. այժմու կայսրն եւս որ Թիւօ—Տիւֆ կկոչուի իւր նախորդացը ատելութիւնը ժառանգելով՝ շատ նեղութիւններ տուաւ քրիստոնէից ու գաղղիացի քարոզչաց, զրկելով զնոսա եւ հալածելով: Այս պատճառաւ նափուէոն կայսրը նաւատորմիղ եւ բանակ մը զրկեց իՔօչինը, որ այլ եւ այլ պատերազմներով եւ յաղթութեամբք քրիստոնէից վերէժն առին, ազատութիւններ ձեռք ձգեցին ու տոկոսեօք հանգերձ քրիստոնէից ինչքը պահանջեցին. բայց դեռ պատերազմը լմնցած չէ. Գաղղիոյ բանակը հօն կեցած է եւ միշտ կ'հսկէ, եւ մանր մունր խառնուրդներու եւ յաղթութեանց լրերը կուտան լրբարգիւրք: Այս պատճառաւ մեք ալ մեր ընթերցողաց արժան համարեցինք համառօտ տեղեկութիւն մը տալ այս անձանօթ երկրին վրայ, ընծայելով միանգամայն Քօչինի կռատան մը պատկերը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՄՈԾԱԿԻ ԽԱՅԹԵԼՈՒՆ ՏԱԻԸ ԿՏՐԵԼ

Մոծակէ խոյթուած տեղը շուտ մը շփէ անուշադրի ոգիքով, որ է նըշարր րուհու, իսկոյն ցաւը կանցնի:

ԳԻՏԵԼԱՄ ԵԻՃՈՒԿ

Երկու շիշ կամը եփ հանելէն վերջը՝ վրան կէս գաւաթ ցերմակ գինի լից, ու երբոր կամը հանգարտի՝ քամէ:

